Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-462-06.12.2022-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին» 2002 թվականի փետրվարի 6-ի ՀՕ-305 օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել նոր մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ձերբակալվածներին պահելու վայրերի շինության և կահավորման առանձնահատկությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Հոդված 2. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:
2. Սույն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ընդունվելու է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում:

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում

Կ-462-06.12.2022-ՊԱ-011/Ø1

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ

Հոդված 1. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» 2002 թվականի փետրվարի 6-ի ՀՕ-305 օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել նոր մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ձերբակալվածներին պահելու վայրերի շինության և կահավորման առանձնահատկությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

~~**Հոդված 2.** Սույն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը կընդունվի սույն օրենքի ընդունումից հետո վեցամսյա ժամկետում:~~

~~**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:~~

Հոդված 2. Եզրափակիչ և անցումային դրույթներ

3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ընդունվելու է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Կ-462-06.12.2022-ՊԱ-011/1*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներ**	Առաջարկում ենք նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներով նախատեսվող եզրափակիչ և անցումային դրույթների վերաբերյալ կարգավորումները միավորել մեկ «Եզրափակիչ և անցումային դրույթներ» վերտառությամբ հոդվածի մեջ՝ առանձին մասերի տեսքով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասի պահանջները, որոնց համաձայն՝ *նորմատիվ իրավական ակտը ունենում է եզրափակիչ մաս, եթե սահմանվում են՝ նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու ժամկետները, գործողության ժամկետները, երբ նորմատիվ իրավական ակտը կամ դրա առանձին մասը նախատեսված է սահմանափակ ժամկետով գործողության համար (ժամանակավոր ակտ կամ ժամանակավոր դրույթ): Այս դեպքում նշվում է ակտի կամ դրա առանձին մասի գործողության հստակ ժամկետը:* *Եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության)*	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը: Ըստ այդմ նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 2. Եզրափակիչ և անցումային դրույթներ 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: 2. Սույն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ընդունվելու է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում:»		